ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 փետրվարի 2022 թվականի N 46 - Ա

«ՇԱՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՀԵՐՄԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով, հիմք ընդունելով «Շամբի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի նիստի N 8 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Շամբի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Հերմինե Ստեփանյանի հետ 2022 թվականի փետրվարի 8-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. 2022 թվականի փետրվարի 8-ից լուծել «Շամբի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սամվել Զաքարյանի հետ 2017 թվականի փետրվարի 7-ին կնքված N 25 աշխատանքային պայմանագիրը՝ գործողության ժամկետը լրանալու պատճառով:

07.02.2022

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2022թ. փետրվարի 7
ք. Կապան